

վերնատուները, գիւղերը, քաղաքները, մարդերը ըլլային տժգոյն, հարկադիր տժգունութեամբ մը: Այդ խեղճուկ շրջանակի մէջ, Մաթիկ Մելիքխանեանց դրաւ քանի մը մարդեր, որոնց հանդէպ սրտառուչ էր իր ճիգը ժուժկալ մնալու, մա՛նաւանդ հիմա, երբ կը պայքարէր անոնց հիմնած իմաստի դրութեան դէմ: Զգայի էր, որ նուաճուած էր այդ մարդոց սկզբնայարդար հրապոյրէն, ինք չրսաւ՝ մեծութենէն: Անունները, զորս տուաւ, այսօր այդ կուսակցութեան պանթէոնը պատկառելի ընող սրբութիւնները կը դաւանուին: Ապագան կրնար դատել, դատապարտել այդ մարդերը, քանդել անոնց հեքիաթը, բայց պիտի ըլլայ զգածեալ հոգեխառնութեան մը մէջ ամէն անգամ, որ անցեալը տեսնելու իր փափաքը պահէ գերծներկայի ամէն թելադրանքէ: Այդ գնով միայն մենք արտօնուած ենք չամէնալ մեր անցեալէն: Որքան շա՛տ՝ գրուելի՛քը, երբ ատենը գայ իրաւ վերագնահատումին, ըլլան լուծ դառն ցաւերը, յարդարուած՝ մեր հոգեդաշտը անհուն սուգերու հանդէս մը ընող արդի մեր հակամարտութիւնները, քանի որ հայրենիքին սիրոյն վրայ մենք զմեզ կոտորելու չափ անտրամաբան տեսանողներ դուրս եկանք...: Նոր եկեղեցի մը պիտի չվատնէր զանոնք սրբբացնելու, ինչպէս եղած է ճակատագիրը ուրիշներու, ասոնք ալ տարբեր ժողովուրդներու մէջ՝ նոր օրերու, կարգերու, երագներու մարգարէներ, որոնց անունը յաւերժացած է ո՛չ միայն մագաղաթներու, այլեւ՝ մարմարներու, երկաթներու վրայ: Ես կը լռեմ Մաթիկին կուռքերը, յատուկ անուններէ զգացած երկիւղիս հպատակ: Ինչ որ քառասուն տարիներ ետքը յստակ է իմ հոգիին, ատիկա պատկառանքն էր, որով պարուրուած էին անոր ո՛չ միայն բառերը, այլեւ՝ շարժումները, երբ կ'ըսէր զանոնք:

Հիմա, երբ կը գրեմ այս տողերը, որքան բեկո՛ւմ կը զգամ, թէ կը ծանրանայ իմ բառերուն իւրաքանչիւրին ներսը: Տխո՞ւր: Դուք գտէք բառը: Ոչ մէկ հիացում ու ոչ մէկ պատրանք չեն բանտուիր այդ տղոց ներսը, որոնց